ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 5

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31 _ Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 – րդ հոդվածի 6- րդ պարբերության պահանջներով .

Ավագանին որոշում է՝

Հաստատել Ազատաշեն համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 31- ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Ազատաշեն համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21 – ի թիվ 29- Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

2. << Վեոլիա - ջուր >> Փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21 –Ի ԹԻՎ 29- Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի , << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի 18– րդ կետով և << Իրավական ակտերի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 72 - րդ հոդվածի պահանջներով .

Ավագանին որոշում է՝

Որոշում 6.

1. Սահմանել Ազատաշեն համայնքի 2017թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝

1.1Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների եւ ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար

Հիմնական շենքերի եւ շինությունների համար՝

ա / մինչեւ 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաեւ մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների համար՝15000 դրամ,

բ /Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի եւ շինությունների համար՝

բա. 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 30000դրամ,

բբ/ 500-ից մինչեւ 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 50000 դրամ,

բգ/ 1000-ից մինչեւ 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 50000 դրամ,

բդ/ 3000-ից եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 100000 դրամ.

Ոչ հիմնական շենքերի եւ շինությունների համար՝

գ/ մինչեւ 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինություն ների համար՝ 3000դրամ,

դ/ 20 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 5000 դրամ.

1.2Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի եւ շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման եւ բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ,

բ/բացի շենքերի եւ շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաեւ կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, եւ, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաեւ նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը եւ դրույքաչափերը՝ շենքերի եւ շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որին կատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը եւ դրույքաչափերը.

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000դրամ.

1.4 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ.

1.5Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում եւ կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 60000դրամ.

1.6 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

1.7Համայնքի վարչական տարածքում ոգելից եւ ալկոհոլային խմիչքներիեւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1/ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,

բ/26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝12000դրամ,
գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝14000դրամ,
դ/ 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000դրամ,
ե/200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ,
զ/500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000դրամ
2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա/մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10000 դրամ,
բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000դրամ,
գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000դրամ,
դ/ 100-ից մինչ եւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000դրամ,
ե/ 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000դրամ
զ/ 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 դրամ.
1.8 Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝բացօթյա առեւտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.
1.9 Համայնքի վարչական տարածքում առեւտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին եւ բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա/ առեւտրի օբյեկտների համար՝ 50000դրամ,
բ/ հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 դրամ,
գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200000դրամ,
դ / խաղատների համար՝ 500000դրամ,
ե/. շահումով խաղերի համար՝ 300000 դրամ,
զ/վիճակախաղերի համար՝ 150000դրամ.
1.10 Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5000դրամ,
բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,
գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝12000 դրամ,
դ/ 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի

համար՝ 16000 դրամ,

ե/ 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000 դրամ

զ/ 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 32000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

դ/ 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝6000 դրամ,

ե/ 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000դրամ,

զ/ 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝16000դրամ.

1.11 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչեւ 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ,

գ/ սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ,

ե/դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 375դրամ ,

զ/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել եւ տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 150 դրամ

1.12Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում եւ այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000դրամ.

1.13 Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000դրամ.

1.14 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (երաժշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եւ (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000դրամ.

2.Սահմանել Ազատաշեն համայնքի 2017թվականի տեղական վճարների հետեւյալ տեսակները և դրույքաչափերը՝

2.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ

հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000դրամ

2.2 Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձեւակերպման համար՝ համայնքիմատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ

2.3 Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձեւակերպման համար՝ համայնքիմատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ

2.4 Համայնքի տնօրինության եւ օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 10000դրամ

2.5 Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների եւ աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000դրամ

2.6 Համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար , յուրաքանչյուր ամիս սահմանել վճար՝

ա/կենցաղային աղբի համար , յուրաքանչյուր բնակչից՝ 50դրամ

բ/շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման համար ըստ ծավալի՝ 1 խմ համար՝ 500.դրամ

2.7 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար սահմանել՝500 դրամ

3. Ազատաշեն համայնքի 3 – րդ փողոցի գազալցակայանը համարել 1 – ին գոտի և հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար կիրառել 0 , 75 գործակիցը :

4. Սույն որոշման 1 –ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0, 5 գործակիցը , բացառությամբ սույն որոշման 4 – րդ ենթակետի :

5. Ուժը կորցրած ճանաչել Ազատաշեն համայնքի ավագանու 21.11.2016թվականի <<Ազատաշեն համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 29- Ն որոշումը :

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7

<< ՎԵՈԼԻԱ- ՋՈՒՐ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի 21 – րդ կետի պահանջներով .

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համայնքի խմելու ջրի ներքին ցանցը սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Վեոլիա-ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը :

2. Գույքի գտնվելու վայրն է ՝ Հայաստանի Հանրապետություն , Արարատի մարզ Ազատաշեն համայնք

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ